ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիս, 2026 թվականի N 16-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2026 թվականի հունիսի 16-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի նկատմամբ խրախուսման միջոց կիրառելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի տեղակալ – ծրագրերի տնօրեն Լևոն Մարգարյանի և գործադիր տնօրենի տեղակալ – ֆինանսական տնօրեն Արարատ Հակոբյանի նկատմամբ խրախուսման միջոց կիրառելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2025 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժին վճարելու և տարեկան շահութաբաժնի չափը հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

15 հունիս, 2026 թվական
ք. Երևան